**ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի ԹԻՎ 2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՏԱ-Ի ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՌԱԿՑՄԱՆ ԿԱՐԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵՏԱՂԻ ՉՔԱՅՔԱՅՈՂ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-2/26-03/07**

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК» (ՍԳԲ) (ОЗП) 03/07 Գնման ընթացակարգերի բաժին Отдел закупочных процедур «25» 02 2026թ.20 թ

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ - ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 05.05.2025 թվականին տրված լիազորագրի հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

**ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղը**, ի դեմս տնօրեն Ալբերտ Բաղդասարյանի, որը գործում է ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՏԱ-ի խողովակաշարերի և սարքավորումների եռակցման կարերի և հիմնական մետաղի չքայքայող մեթոդներով ստուգման իրականացման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:**

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 **Պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կատարողի կողմից վերընշված փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն չի երաշխավորում 50 օրում անցագրերի տրամադրումը:**

2.4.5 **Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **34337178 (երեսունչորս միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար մեկ հարյուր յոթանասունութ)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ - 5722863** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N2) նախատեսված ամիներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության

մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **26** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **«ՀԱԷԿ» ՓԲԸ** | **ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղ** |
| 0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,<br>Հ/Հ 1930000199200100<br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,<br>ՀՎՀՀ 04401874,<br>**Հեռ./ֆաքս՝** 28-18-80, 28-06-69,<br>**Հեռ.** 20-04-91, 36-32<br>**E-mail:** anpp@anpp.am | 0019, ք. Երևան, Այգեձորի փ. 67,<br>Հ/Հ 1570054691090100<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ,<br>ՀՎՀՀ 01507302,<br>**Հեռ.՝** 010-22-21-55,<br>**E-mail:** armenergonaladka@gmail.com |
| **Ս. Մաթևոսյան** | **Ա. Բաղդասարյան** |

Հավելված N 1
«25» 02. 2026թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-2/26-03/07 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71631100 | Համաձայն «Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՏԱ-ի խողովակաշարերի և սարքավորումների եռակցման կարերի և հիմնական մետաղի չքայքայող մեթոդներով ստուգման իրականացման Տեխնիկական պահանջի» ՝ հաստատված ՀԱԷԿ-ի գլխավոր ճարտարագետի կողմից 3-ը դեկտեմբերի 2025թ.:<br>(ՊՆՎ-2026 ՏԱ մետաղի և եռակցման կարերի շահագործողական ստուգում համաձայն УЭ.ЭТД.17.ОДМ-002 ծրագրի):<br>Մասնագետները պետք է ատեստավորված լինեն, աշխատանքների կատարման սարքավորումները պետք է չափագիտական ստուգում անցած լինեն, ըստ նշված տեխնիկական փաստաթղթերի՝<br>ՊՆԱԷ Գ-7-010-89; ՊՆԱԷ Գ-7-014-89<br>ՊՆԱԷ Գ-7-015-89; ՊՆԱԷ Գ-7-030-91<br>ՊՆԱԷ Գ-7-031-91; ՌԲ -089-14:<br>Ծառառայությունը մատուցել համաձայն ծավալաթերթի՝ հաստատված ՀԱԷԿ-ի գլխավոր ճարտարագետի կողմից 3-ը դեկտեմբերի 2025թ.: | լրակազմ | 34337178 | 1 | Արմավիրի մարզ, ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ | Ծառայությունը մատուցել ՊՆՎ 2026-ի ընթացքում (նախնական ապրիլ÷հունիս 2026թ.), առավելագույնը 60 (վաթսուն) օրացուցային օրում: Ծառայության մատուցման սկիզբ է համարվում ՀԱԷԿ ՓԲԸ տարածքի մուտքի թույլտվություն ստանալու հաջորդ օրը: Պայմանագրի ավարտը (ընդունում-հանձնումը)՝ ՊՆՎ 2026 ավարտից երեսուն օրացուցային օր հետո: |

Լրացուցիչ պայմաններ՝

*ՊՆՎ 2026 տարեկան ժամանակացույցը հաստատվելուց հետո ընտրված մասնակցին նախապես կտեղեկացվի աշխատանքների/ծառայությունների կատարման ժամկետների վերաբերյալ:

1. Կատարողը ծառայության մատուցման ավարտին պետք է ներկայացնի կատարված աշխատանքների ընդունման-հանձնման Ակտ (Ձև 2):

2. *Կապարողը աշխատանքները սկսելուց առաջ պետք է ներկայացնի տեղեկանք, որ աշխատակիցները իրավունք ունեն աշխատելու հսկման գոտում (КЗ), չունեն բժշկական հակացուցումներ և դոզիմետրյան սահմանափակումներ (Инструкция по радиационной безопасности ААЭС рк.ЭТД.12.ОРБ-001 пункт 10,1):*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղ |
| Ա. Մաթևոսյան | Ա. Բաղդասարյան |

*Պայմանագրի կառավարիչ՝ Աշոտ Գրիգորյան,*
*հեռ. 010282960, email: ashot.grigoryan@anpp.am*

Հավելված N 1.1
«25» 02. 2026թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-2/26-03/07 ծածկագրով պայմանագրի

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
“АЙКАКАН АТОМАЙИН ЭЛЕКТРАКАЯН”
(“АРМЯНСКАЯ АТОМНАЯ ЭЛЕКТРОСТАНЦИЯ”)

**УТВЕРЖДАЮ**

**Главный инженер ААЭС**

**_____________ Григорян А.Р.**

**“ 03 ” 12 __________ 2025г.**

# ТЕХНИЧЕСКОЕ ТРЕБОВАНИЕ

# НА ПРОВЕДЕНИЕ НЕРАЗРУШАЮЩЕГО КОНТРОЛЯ ОСНОВНОГО МЕТАЛЛА И СВАРНЫХ СОЕДИНЕНИЙ ОБОРУДОВАНИЯ И ТРУБОПРОВОДОВ ТЦ БЛОКА №2 АРМЯНСКОЙ АЭС

## УТ.ЭТД.48. ОДМ-003

**СОГЛОСОВАНО**

**ЗГИР ААЭС**

**_____________Карапетян М.С.**

**“ 14 ” 11 __________ 2025г.**

МЕЦАМОР 2025г.

| | Должность | Фамилия И. О. | Подпись | Дата |
|---|---|---|---|---|
| Проверил | НОДМ | Григорян А. Г. | | 02.10.25 |
| Разработал | ВИОДМ | Погосян М. Р. | | 02.10.2025 |

## СОДЕРЖАНИЕ

1 Обозначения и сокращения ....................3
2 Общие сведения и цель ....................4
3 Методы и объем контроля ....................5
4 Требования для проведения контроля ....................6
5 Услуги и поставки, осуществляемые ААЭС....................8
6 Правила стандарты и другие нормативные документы ....................9

# 1 ОБОЗНАЧЕНИЯ И СОКРАЩЕНИЯ

| Сокращение<br>(обозначение) | **Расшифровка<br>(пояснение)** |
| --- | --- |
| ААЭС | Армянская атомная электростанция |
| АЭС | Атомная электростанция |
| ВИК | Визуально-измерительный контроль |
| ЗАО “ААЭК” | Закрытое акционерное общество “Айкакан атомайин электракаян” |
| МПК | Магнитопорошковый контроль |
| НД | Нормативная документация |
| НОДМ | Начальник отдела диагностики металла |
| НП | Нормы и правила |
| ОДМ | Отдел диагностики металла |
| ПНАЭ | Правила и нормы в атомной энергетике |
| ППР | Планово-предупредительный ремонт |
| ПВД | Подогреватель высокого давления |
| ПР | Правила аттестации |
| ПЭН | Питательный электронасос |
| РД ЭО | Руководящий документ эксплуатирующей организации |
| СПП | Сепаратор–пароперегреватель |
| ТГ | Турбогенератор |
| ТТ | Техническое требование |
| ТЦ | Турбинный цех |
| УЗК | Ультразвуковой контроль |
| УЗТ | Ультразвуковая толщинометрия |
| ЭК | Эксплуатационный контроль |
| ЭТД | Эксплуатационная техническая документация |

## 2 ОБЩИЕ СВЕДЕНИЯ И ЦЕЛЬ

### 2.1. Общие сведения о документе

2.1.1 Разработка настоящего Технического требования направлена на приобретение услуг по проведению (неразрушающего) эксплуатационного контроля основного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ блока №2 ААЭС для обеспечения безопасной эксплуатации ААЭС, в соответствии с требованиями нормативной и технической документации.

2.1.2. Настоящее «Техническое требование на проведение неразрушающего контроляосновного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ блока №2 ААЭС» (далее по тексту ТТ) разработан на основании пункта7«Программы эксплуатационного контроля основного металла, сварных соединений и наплавок оборудования и трубопроводов ТЦ блока №2 на 2026г.» УЭ.ЭТД.17.ОДМ-002.

2.1.3 В настоящем ТТ представлены требования, к работам по обеспечению и провидению эксплуатационного контроля основного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ блока №2 ААЭС. Все работы по контролю металла будут проводиться в условиях действующей АЭС на остановленном реакторе э/б №2 в период ППР-2026 сапреляпо август (срок будет в дальнейшем уточнен).

2.1.4 В ТТ указаны условия и зоны проведения эксплуатационного контроля основного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ блока №2 ААЭС.

2.1.5.Работы по ТТ относятся к процедурам нормальной эксплуатации.

2.1.6.Требованиями данной ТТ должны руководствоваться все организации и персонал, привлекаемый для реализации работ по данной ТТ.

### 2.2. Цель

2.2.1. Цель разработки ТТ

_установление требований к Исполнителю, который должен обеспечить качественное проведение эксплуатационного контроля основного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ энергоблока №2 ААЭС;

_ обеспечение требований по квалификационному процессу эксплуатационного контроля основного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ .

– обеспечение выполнение ЭКосновного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦв соответствии требований НД приведенных в пункте 6Настоящего ТТ.

– объективнаяоценка текущего технического состоянияэксплуатационного контроля основного металла и сварных соединений оборудования и трубопроводов ТЦ энергоб;

– принятия решений о необходимости устранения выявленных несплошностей (при необходимости);

– принятия решений об изменении периодичности контроля и/или для использования других дополнительных методов контроля;

– сравнение полученных результатов с результатами предыдущими контролями.

# 3 МЕТОДЫ И ОБЪЕМ КОНТРОЛЯ

## 3.1. Объем и методы контроля

3.1.1. Сведения о методах и объемах контроляоборудования и трубопроводовТЦ представлены втаблице 3.1и в Приложении 1.

3.1.2. Объем эксплуатационного контроля основного металла и сварных соединенийоборудования и трубопроводов ТЦустанавливается в соответствии с УЭ.ЭТД.17.ОДМ-002 и АТПЭ-2-2011.

Таблица 3.1 Методы и объемконтроля оборудования и трубопроводов.

| №№ п/п | Наименование | Метод контроля | Примечание |
|---|---|---|---|
| 1. | **Подогреватели низкого давления №1÷5 ТГ-4** | ВИК; МПК;УЗТ | |
| 2. | **Трубопровод питательной воды**<br>-От ПЭН - 1;2до коллектора<br>-От впускного клапана ПВД, через арматур 23ВП-7 2ВП-14; 23ВП-7А, 23ВП-6 ( Класс безопасности – 4) | ВИК; МПК; УЗК; УЗТ | |
| 3. | **Всасывающий трубопровод ПЭН**<br>-От ПЭН-1;2 до коллектора<br>-От арматур 23ВП-1 до 23ВП-2 | ВИК; МПК; УЗК; УЗТ | |
| 4. | **Трубопровод основного конденсата ТГ 3**<br>-От коллектора на отметке +3,6 до ПНД-1; до ЭУ; до ОЭ | ВИК; МПК;УЗК;УЗТ | |
| 5. | **Трубопровод основного конденсата ТГ 4**<br>-От коллектора на отметке +3,6 до ПНД-1; до ЭУ; до ОЭ | ВИК; МПК; УЗК; УЗТ | |
| 6. | **Трубопровод питательной вады ПВД ТГ-3** | ВИК;УЗК;УЗТ | |
| 7. | **Трубопровод дренажей ПВД ТГ- 3;4**<br>Регуляторы уровня ПВД-6; 7; 8ТГ- 3;4 | ВИК; УЗТ | |
| 8. | **Паропровод промперегрева I ст СПП ТГ-3** | ВИК; МПК;УЗТ | |
| 9. | **Паропровод промперегрева II ст СПП ТГ-3** | ВИК; МПК;УЗТ | |
| 10. | **Дренажный трубопровод промперегрева Iст СПП ТГ-3** | ВИК;УЗТ | |
| 11. | **Дренажный трубопровод промперегрева IIст СПП ТГ-3** | ВИК; УЗТ | |
| 12. | **Трубопровод отвода сепарата из СПП ТГ- 3** | ВИК; УЗТ | |
| 13. | **Трубопровод греющего пара**<br>Коллектор от арматур 2ПО -15 до арматур 24ПО -10;<br>-От коллектора через арматур 23ПО -11, 12 до арматур 24ПО -22, до деаэратора №-3 | ВИК;УЗК;УЗТ | |
| 14. | **Паропроводы отборов 1÷5 ТГ-3** | ВИК; УЗТ | |

### 3.2. Средства контроля

3.2.1Средства контроля для выполнения работ по настоящей ТТ должны пройти метрологическую поверку, иметь свидетельство о поверке с датой до следующей поверки.

## 4 ТРЕБОВАНИЯ ДЛЯ ПРОВЕДЕНИЯ КОНТРОЛЯ

### 4.1. Требования к исполнителю

4.1.1. Исполнитель должен соответствовать требованиям главы VIНП-084-15 «Правила контроля основного металла, сварных соединений и наплавленных поверхностей при эксплуатации оборудования, трубопроводов и других элементов Атомных станций».

4.1.2. Исполнитель, проводящий контроль, должен быть аккредитован в соответствии с установленным порядком на перечень услуг и работ в области атомной энергетики, для оказания которых необходима аккредитация.

### 4.2. Требования к контролерам

4.2.1. Персонал исполнителя должен иметь квалификационные аттестаты, выданные квалификационным органом и заверенные в соответствии с ПНАЭ Г-7-010-89 и ПР1.3.3.99.0010-2010.

### 4.3. Требования к оценке качества

4.3.1. Оценку качества эксплуатационного контроляосновного металла и сварных соединенийоборудования и трубопроводов ТЦвыполнить в соответствии НП-084-15, АТПЭ-2-2011; РД ЭО 0571-2006; ПНАЭ Г-7-002-86.

4.3.2. Трещины, отслоения, прожоги, свищи, наплывы, усадочные раковины, подрезы, брызги металла, непровары, скопления и неодиночные включения, выявленные при проведении контроля, не допускаются.

### 4.4. Требования к языку

4.4.1. Все документы и отчёты, связанные с контролем и квалификацией методик должны быть составлены на русском языке. Рабочие и процедурные документы, необходимые персоналу Исполнителя для его работы, могут быть на родном языке этого персонала.

### 4.5. Требования к конфиденциальности

4.5.1. Вся документация (чертежи, эскизы, снимки, расчеты, анализы, заключения, протоколы, отчеты и т.п.), использованная и/или разработанная в ходе выполнения работ по настоящим ТТ, является собственностью ААЭС и объявляется конфиденциальной. Использование ее вне настоящей работы и/или передача третьим лицам возможна только при письменном согласии ААЭС.

### 4.6. Требования к отчетной документации

4.6.1. По окончании контроля исполнитель должен составить Протоколы (заключения) по результатам проведенного контроля в течение 5 суток.

4.6.2. Для архивного хранения на станции должны быть представлены твердые копии (распечатки), а также компьютерные файлы, содержащие полный объем информации по проведенному контролю. Все записанные (зарегистрированные) файлы данных, по проведенному контролю, должны быть переданы ААЭС.

4.6.3. Все методики, и документы, разработанные в рамках настоящего контракта, принадлежат ААЭС. Любое использование вышеуказанных документов должно быть согласованно с ЗАО «ААЭК».

**4.7. Требования к проведению работ**

4.7.1. Предусмотренный настоящими ТТэксплуатационный контроль основного металла и сварных соединенийоборудования и трубопроводов ТЦ энергоблока №2 ААЭС должен быть выполнен в периодППР-2026г от апреля до августа (предварительный срок).

Конкретные сроки выполнения натурных работ будут определены в детальном Графике, разработанном в соответствие с линейными графиками ППР-2026.

4.7.2. Доставка на ААЭС системы НК (оборудовании, аппаратура, испытательные и настроечные образцы) должна быть произведена в сроки, обеспечивающие выполнение натурных работ в период ППР 2026.

4.7.3. До начала натурных работ вся документация, подтверждающая соответствие предлагаемой комплекта оборудования настоящим ТТ, должна быть согласована техническим руководством ААЭС.

4.7.4. Предварительные результаты контроля должны представляться техническому руководству ААЭС в ходе (ежесуточно) и по завершении натурных работ.

4.7.5. Окончательный Протоколы (заключения) по выполненному ЭК должен быть представлен техническому руководству ААЭС на рассмотрение и согласование не позднее 5суток после завершения натурных работ.

# 5 УСЛУГИ И ПОСТАВКИ, ОСУЩЕСТВЛЯЕМЫЕ ААЭС

## 5.1. Доступ к участкам выполнения контроля

5.1.1. ААЭС обеспечит необходимые условия выполнения работ (подготовку рабочих мест) в соответствие с действующими на станции инструкциями:

– установка лесов, подмостей (при необходимости);
– съем теплоизоляции;
– зачистка контролируемой поверхности;
– освещение и вентиляцию.

5.1.2. ААЭС обеспечит административное оформление допуска персонала Исполнителя на рабочие места в соответствие с действующими на станции инструкциями:

– открытие теплового наряда-допуска бригады Исполнителя на выполнение предусмотренных работ (состав бригады определяет Исполнитель).

## 5.2. Документация

5.2.1. ААЭС предоставит всю имеющуюся на станции документацию, (чертежи, эскизы, формуляры, инструкции, методики и т.п.), запрошенную Исполнителем как обоснованно необходимые для проведения исследований.

5.2.2. Полную информацию о результатах предыдущих инспекций исполнитель работ может получить в станционном архиве (для сравнения результатов).

# 6. ПРАВИЛА, СТАНДАРТЫ И ДРУГИЕ НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ

| № п/п | Наименование | Обозначение |
|---|---|---|
| 1. | Программы эксплуатационного контроля основного металла, сварных соединений и наплавок оборудования и трубопроводов ТЦ блока №2 на 2026г. | УЭ.ЭТД.17.ОДМ-002 |
| 2. | Правила контроляосновного металла, сварных соединений и наплавленныхповерхностей при эксплуатации оборудования, трубопроводови других элементов атомных станций | НП-084-15 |
| 3. | Порядок аттестации контролеров, выполняющих контроль металла действующих АЭС | ПР 1.3.3.99.0010-2010 |
| 4. | Оборудование и трубопроводы атомных энергетических установок. Сварные соединения и наплавки. Правила контроля. | ПНАЭ Г-7-010-89 |
| 5. | Унифицированные методики контроля основных материалов (полуфабрикатов), сварных соединений и наплавки оборудования и трубопроводов атомных энергетических установок. Визуальный и измерительный контроль | РБ-089-14 |
| 6. | Унифицированные методики контроля основных материалов (полуфабрикатов), сварных соединений и наплавки оборудования и трубопроводов атомных энергетических установок. Капиллярный контроль | РБ-090-14 |
| 7. | Унифицированные методики контроля основных материалов (полуфабрикатов), сварных соединений и наплавки оборудования и трубопроводов АЭУ. Магнитопорошковый контроль. | ПНАЭ Г-7-015-89 |
| 8. | Унифицированные методики контроля основных материалов (полуфабрикатов) сварных соединений и наплавок оборудования и трубопроводов атомных энергетических установок. Ультразвуковой контроль. Часть II. Контроль сварных соединений и наплавки | ПНАЭ Г-7-030-91 |
| 9. | Унифицированные методики контроля основных материалов (полуфабрикатов), сварных соединений и наплавки оборудования и трубопроводов атомных энергетических установок. Ультразвуковой контроль. Часть III. Измерение толщины монометаллов, биметаллов и антикоррозионных покрытий | ПНАЭ Г-7-031-91 |
| 10. | Нормы допустимых толщин элементов трубопроводов из углеродистых сталей атомных станций. | РД ЭО 0571-2006 |
| 11. | Нормы расчета на прочность оборудования и трубопроводов атомных энергетических установок | ПНАЭ Г-7-002-86 |
| 12. | Типовая программа контроля состояния основного металла и сварных соединений оборудования и трубопроводов атомных электростанций с реакторной установкой ВВЭР-440 при эксплуатации | АТПЭ-2-2011 |

## ЛИСТ СОГЛАСОВАНИЯ

| №№ пп | Должность | Фамилия И. О. | Подпись | Дата |
|---|---|---|---|---|
| 1. | НТЦ | АрутюнянА.Г. | [signature] | 14.11.25г. |
| 2. | НОППР | Мкртчян А.А. | [signature] | 14.11.25 |



ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան

ԿԱՏԱՐՈՂ
ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղ

Ա. Բաղդասարյան

Հավելված N 1.2
« 25 » 02. 2026թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-2/26-03/07 ծածկագրով պայմանագրի

**УТВЕРЖДАЮ**

**Главный инженер ААЭС**

**_______________ Григорян А.Р.**

**"03" 12 2025г.**

# О Б Ъ Е М

## ПРОВЕДЕНИЕ НЕРАЗРУШАЮЩЕГО КОНТРОЛЯ ОСНОВНОГО МЕТАЛЛА И СВАРНЫХ СОЕДИНЕНИЙ ОБОРУДОВАНИЯ И ТРУБОПРОВОДОВ ТЦ БЛОКА №2 АРМЯНСКОЙ АЭС

## ППР-2026

| п/п | Наименование работ | Единица измерения | количество | Цена за единицу, драм | Сумма, драм |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **3. Подогреватель низкого давления ПНД №1÷5 ТГ-4** | | | | |
| 3.1 | Сварные угловые соединения потрубков (вход и выход основного конденсата) с обечайкой<br>ВИК<br>УЗТ-16 уч. | узел<br>участок | 4<br>16 | | |
| 3.2. | Сварные угловые соединения потрубка подвода греющего пара с корпусом ПНД<br>ВИК<br>УЗТ-24 уч. | узел<br>участок | 6<br>24 | | |
| 3.3. | Основной металл, кольцевые и продольные сварные соединения корпуса ПНД: (снаружи, изнутри)<br>ВИК<br>МПК-40 дм² | узел<br>дм² | 20<br>40 | | |
| 3.4. | Основной металл корпуса в зоне потрубка греющего пара снаружи<br>ВИК<br>УЗТ-16 уч. ( для участков от 15 до 25) | узел<br>участок | 16<br>16 | | |
| | **6.2. От ПЭН 1; 2 до коллектора**<br>**От впускного клапана ПВД, через арматур 23ВП-7 2ВП-14, 23ВП -7А 23ВП -6** | | | | |
| 6.2.1 | Сварные соединения:<br>**ПЭН-1**<br>ВИК S ≤20мм<br>УЗК (Ø325-4 шт. )-4, 1п.м. | узел<br>п.м. | 16<br>4,1 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **ПЭН-2**<br>ВИК S ≤20мм<br>УЗК (Ø325-4 шт., Ø426-5 шт. )- 10,75 п.м. | узел<br>п.м. | 35<br>10,75 | | |
| 6.2.2. | Гибы:<br>**ПЭН-1**<br>ВИК S ≤20мм<br>МПК-346 дм$^2$ (301÷ 500дм$^2$)<br>УЗТ-15уч. | узел<br>дм$^2$<br>участок | 6<br>346<br>15 | | |
| | **ПЭН-2**<br>ВИК S ≤20мм<br>МПК-880 дм$^2$<br>УЗТ-36уч. | узел<br>дм$^2$<br>участок | 6<br>880<br>36 | | |
| ПЭН-1, 2 | | | | | |
| 6.2.3 | Тройники (радиусные переходы)<br>ВИК S ≤20мм<br>МПК-27дм$^2$ (до 300дм$^2$) | узел<br>дм$^2$ | 5<br>27 | | |
| 6.2.4 | Арматура (корпуса снаружи)<br>ВИК S ≤20мм<br>МПК-20дм$^2$ (до 300дм$^2$) | узел<br>дм$^2$ | 5<br>20 | | |
| 6.2.6 | Дросселирующие устройства<br>ВИК S ≤20мм<br>УЗТ-16уч. | узел<br>участок | 2<br>16 | | |
| 6.2.7 | Сварные соединения дренажей, воздушников, импульсных и байпасных линий до первой запорной арматуры<br>ВИК S ≤20мм<br>МПК-34дм$^2$ (до 300дм$^2$) | узел<br>дм$^2$ | 38<br>34 | | |
| **9. Всасывающий трубопровод ПЭН**<br>**- От ПЭН 1; 2 до коллектора**<br>**- От арматур 23ВП-1** до 23ВП-2 | | | | | |
| 9.1 | Сварные соединения:<br>ВИК S ≤20мм<br>УЗК | узел<br>п.м. | 26<br>11,84 | | |
| 9.2 | Гибы:<br>ВИК S ≤20мм<br>УЗТ-24уч. (15÷ 25) | узел<br>участок | 4<br>24 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **10. Трубопровод основного конденсата ТГ-3 - От коллектора на отметке +3,6 до ПНД-1, до ЭУ, до ОЭ** | | | | | |
| 10.1 | Сварные соединения:<br>ВИК S ≤20мм<br>УЗК | узел<br>п.м. | 48<br>11 | | |
| 10.2 | Гибы:<br>ВИК S ≤20мм<br>УЗТ-60уч. (56÷65) | узел<br>участок | 10<br>60 | | |
| **11. Трубопровод основного конденсата ТГ-4 - От коллектора на отметке +3,6 до ПНД-1, до ЭУ, до ОЭ** | | | | | |
| 11.1 | Сварные соединения:<br>ВИК S ≤20мм<br>УЗК | узел<br>п.м. | 42<br>11 | | |
| 11.2 | Гибы:<br>ВИК<br>УЗТ-15уч. (15÷25) | узел<br>участок | 10<br>15 | | |
| **13. Трубопровод питательной воды ПВД ТГ-3** | | | | | |
| 13.1 | Сварные соединения<br>ВИК<br>УЗК | узел<br>п.м. | 70<br>16,76 | | |
| 13.2 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (133 уч. ) | узел<br>участок | 19<br>133 | | |
| 13.3 | Регуляторы уровня<br>ВИК<br>УЗТ (48 уч. ) | узел<br>участок | 5<br>48 | | |
| 13.4 | Тройники<br>ВИК<br>УЗТ (15 уч. ) | узел<br>участок | 1<br>15 | | |
| **14. Регуляторы уровня ПВД-6,7,8 ТГ-3,4** | | | | | |
| 14.1 | Регуляторы уровня ПВД-6; 7;8<br>ВИК<br>УЗТ (24 уч.) | узел<br>участок | 36<br>144 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **15. Паропровод промперегрева 1ст СПП ТГ-3** | | | | | |
| 15.1 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (112 уч.) | узел<br>участок | 16<br>112 | | |
| 15.2 | Тройники и арматуры<br>МПК -112 дм² (до 300дм²) | дм² | 112 | | |
| 15.3 | Тройники и арматуры<br>ВИК | узел | 4 | | |
| **16. Паропровод промперегрева IIст СПП ТГ-3** | | | | | |
| 16.1 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (174шт. ) | узел<br>участок | 29<br>174 | | |
| 16.2 | Тройники и арматуры<br>МПК- 152дм² (до 300дм²) | дм² | 152 | | |
| 16.3 | Тройники и арматуры<br>ВИК | узел | 4 | | |
| **17. Дренажный трубопровод промперегрева 1ст СПП ТГ-3** | | | | | |
| 17.1 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (200 уч. )<br>УЗТ (38 уч. ) | узел<br>участок<br>участок | 36<br>200<br>38 | | |
| 17.2 | Выходные патрубки с переходами<br>УЗТ (24 уч. ) | участок | 24 | | |
| **18. Дренажный трубопровод промперегрева IIст СПП ТГ-3** | | | | | |
| 18.1 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (200 уч.) | узел<br>участок | 36<br>200 | | |
| 18.2 | Выходные патрубки с переходами<br>УЗТ (16 уч. ) | участок | 16 | | |
| | | | | | |
| **19. Трубопровод отвода сепарата из СПП ТГ-3** | | | | | |
| 19.1 | Гибы:<br>ВИК<br>Гибы:<br>УЗТ (200 уч.)<br>УЗТ (38 уч.) | узел<br>участок<br>участок | 31<br>200<br>38 | | |
| 19.3 | Выходные патрубки с переходами РУ<br>УЗТ (24 уч.) | участок | 24 | | |
| **20. Трубопровод греющего пара<br>Коллектор от арматур 2ПО-15 до арматур 24ПО-10<br>От коллектора через арматур 23ПО-11, 12 до арматур 24ПО-22 до деаэратора №3** | | | | | |
| 20.1 | Сварные соединения::<br>ВИК<br>УЗК | узел<br>п.м. | 24<br>3,76 | | |
| 20.2 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (36 уч.) | узел<br>участок | 11<br>36 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **22. Паропровод отборов 1÷5 ТГ-3** | | | | | |
| **22.1 Паропровод 1 отбора к ПВД-8** | | | | | |
| 22.1.1 | Гибы:<br>ВИК | узел | 11 | | |
| 22.1.2 | Прямые участки<br>УЗТ (15 уч. ) | участок | 15 | | |
| 22.1.3 | Прямые участки<br>После переходов и арматур<br>УЗТ (24 уч. ) | участок | 24 | | |
| **22.2 Паропровод 2 отбора к ПВД-7** | | | | | |
| 22.2.1 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (90 уч.) | узел<br>участок | 15<br>90 | | |
| 22.2.2 | Тройники:<br>УЗТ (16 уч.) | участок | 16 | | |
| 22.2.3 | Переходы:<br>УЗТ (12 уч.) | участок | 12 | | |
| 22.2.4 | Прямые участки<br>После переходов и арматур<br>УЗТ (12 уч.) | участок | 12 | | |
| **22.3 Паропровод 3 отбора к ПВД-6** | | | | | |
| 22.3.1 | Гибы:<br>ВИК<br>УЗТ (133 уч.) | узел<br>участок | 19<br>133 | | |
| 22.3.2 | Тройники:<br>УЗТ (48 уч. ) | участок | 48 | | |
| 22.3.3 | Переходы:<br>УЗТ (16 уч. ) | участок | 16 | | |
| 22.3.4 | Прямые участки<br>После переходов и арматур<br>УЗТ (16 уч.) | участок | 16 | | |
| **22.4 Паропровод 4 отбора к ПНД-5** | | | | | |
| 22.4.1 | Гибы: ВИК<br>Гибы:<br>УЗТ (42 уч. ) | узел<br>участок | 6<br>42 | | |
| 22.4.2 | Переход:<br>УЗТ (15 уч. ) | участок | 15 | | |
| 22.4.3 | Прямые участки<br>УЗТ (88 уч. ) | участок | 88 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **22.5 Паропровод 5 отбора к ПНД-4** | | | | | |
| 22.5.1 | ВИК | узел | 6 | | |
| 22.5.2 | Гибы:<br>УЗТ (42 уч. ) | участок | 42 | | |
| 22.5.3 | Тройники:<br>УЗТ (88 уч.) | участок | 88 | | |
| 22.5.4 | Переход:<br>УЗТ (18 уч.) | участок | 18 | | |
| 22.5.5 | Прямые участки<br>УЗТ (92 уч. ) | участок | 92 | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

............ Ա. Մաթևոսյան

ԿԱՏԱՐՈՂ
ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղ

............ Ա. Բաղդասարյան

Հավելված N 2
«25» 02 2026թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-2/26-03/07 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | **մայիս** | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71631100 | Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի ՏԱ-ի խողովակաշարերի և սարքավորումների եռակցման կարերի և հիմնական մետաղի չքայքայող մեթոդներով ստուգման իրականացում | | | | | **34 337 178** | 34 337 178 | 34 337 178 | 34 337 178 | 34 337 178 | 34 337 178 | 34 337 178 | 34 337 178 | **34337178** |

*Վճարումը կկատարվի անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, փաստացի մատուցված ծառայության հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան

**ԿԱՏԱՐՈՂ**
ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղ

Ա. Բաղդասարյան

*Հավելված 3*
*«      »         20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

____________________

____________________

գտնվելու վայրը ____________
հհ ____________________
հվհհ ____________________

Պատվիրատու

____________________

____________________

գտնվելու վայրը ____________
հհ____________________
հվհհ____________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «          » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

____________________
ստորագրություն

____________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

____________________
ստորագրություն

____________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը    Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20     թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ____________________<br>ազգանուն, անուն | ____________________<br>ազգանուն, անուն |
| ____________________<br>ստորագրություն | ____________________<br>ստորագրություն |

*Հավելված N 4*
*«      »       20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________-ի և ________________-ի միջև «--»   20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը   կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

________________-ի   միջև  «--»  20  թ-ին կնքվել է «----------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

______________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»   20  թ.